ՄԱՄՈՒԼԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ԱԾԱՆՑԱՎՈՐ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ՄԱՆՈՒՇԱԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Զանգվածային լրատվության միջոցները արտացոլում են մարդու գործունեության առօրյա խնդիրները՝ դառնալով ժամանակակից կյանքի հայելին: Այդ գործընթացում ուշագրավ տեղաշարժեր են կատարվում բառապաշարում, քանի որ նոր երևույթները, իրադարձությունները, առարկաները նորովի բնութագրելու, անվանելու անհրաժեշտություն է առաջանում: Դա նախ և առաջ դրսևորվում է ԶԼՄ-ում: «Բնականաբար, զանգվածային լրատվության հիմնական միջոցները հասարակական-քաղաքական իրադարձությունների, գիտատեխնիկական անընախընթաց աճի, մարզական ու մշակութային կյանքի նորությունների հետ լեզվի քարոզչության ու մասսայականացման ամենաարդյունավետ ճանապարհներն են»[1],- նկատում է Խ. Բաղիկյանը:

ԶԼՄ-ն, հատկապես մամուլը, անմիջականորեն արտացոլելով լեզվի բառապաշարում տեղի ունեցող փոփոխությունները, նպաստում է դրա զարգացմանն ու նորոգմանը: Բառապաշարն օրեցօր համալրվում է ոչ միայն նորակազմ տերմիններով, դարձվածային արտահայտություններով, կայուն բառակապակցություններով, այլև ածանցավոր նորակազմություններով:

Առհասարակ, մամուլի բառապաշարն ուսումնասիրելիս կարևորվում է նորակերտ բառերի քննությունը: «Բոլոր ժամանակներում էլ բառապաշարի հիմնական ուղին եղել և մնում է ներքին՝ սեփական բառակազմական միջոցներով բառապաշարը հարստացնելու ուղին, նաև արտաքին՝ ուրիշ լեզուներից կատարվող փոխառությունները»[2]:

Ներքին միջոցներով լեզվի բառային կազմի համալրումը տեղի է ունենում լեզվում եղած բառակազմական հիմնական և երկրորդական ձևույթների՝ արմատների կամ արմատների ու ածանցների միջոցով նորանոր բառեր կազմելով: Ս. Գալստյանի բնորոշմամբ՝ «Բարդ և ածանցավոր բառեր ունեցող լեզուների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ յուրաքանչյուր լեզվի բառակազմությունը ընդհանուր գծերով արտացոլում է այդ լեզվի բառահարաբերությունները, և բարդ ու ա-

---

[1] **Խ. Գ. Բաղիկյան,** Դարձվածային միավորները զանգվածային լրատվության միջոցներում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, № 3 (96), էջ 52:

[2] **Ա. Ա. Մարության,** Բառային փոխառությունների և լեզվի մաքրության հարցի շուրջ, «ՊԲՀ», 1997, № 2, էջ 112:

ծանցավոր բառերից շատերի մեջ այս կամ այն կերպ, հաճախ սաղմնային ձևով, արտահայտվում են երբեմնի առանձին բառերի զանազան կապակցությունները»[3]:

Նոր բառեր կերտելու գործում կարևոր դեր է կատարում ածանցումը՝ որպես բառակազմական միջոց: «Ժամանակակից հայերենում ածանց է համարվում բառակազմական այն ձևույթը, որը, կցվելով բառարմատին կամ հիմքին, փոխում է նրա իմաստը, կազմում է նոր բառ՝ նոր իմաստով: Այսպիսով, ածանցը ինքնուրույն, անկախ գործածություն չունեցող, բառային իմաստ չարտահայտող բառակազմական մասնիկ է, որը միանալով հիմքին կամ բառարմատին, փոխում է նրա իմաստը»[4]:

Ստորև կփորձենք ներկայացնել, թե ինչպիսի ածանցավոր նորակազմություններով է համալրվել հայերենի բառապաշարը վերջին տասնամյակներում:

Ժամանակակից մամուլում հանդիպում են բազմաթիվ նորակազմ ածանցավոր բառեր, որոնց մի մասը բառարաններում դեռ արձանագրված չէ: Օրինակ՝ վարկակերություն («Իրավունք», թիվ 37, 2004 թ.), իշխանազավթում («Գրական թերթ», թիվ 15, 2004 թ.), պահուստատուն («Իրավունք», թիվ 32, 2004 թ.), հողահատկացում («Երևան», թիվ 20, 2004 թ.), ռուսահաճություն («Հայաստանի Հանրապետություն», թիվ 98, 2004 թ.), ձնահեռացում («Հայկական ժամանակ», թիվ 3, 2004 թ.), դպրոցաշինական («Հայաստանի Հանրապետություն», թիվ 49, 2004 թ.):

Սովորաբար նորակազմ բառերի կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեջ կան ժամանակակից հայերենի բառակազմության գրեթե բոլոր տիպերը՝ բարդությունն իր տարբեր ենթատեսակներով, ածանցումն իր կաղապարային տարբեր դրսևորումներով: «Միաժամանակ պետք է նկատել, որ վերջին տասնամյակներում հակումը դեպի երկարաշունչ բարդությունները նվազել է, և ձգտում կա, որ նորակազմ բառերը հնարավորինս կարճ լինեն»[5]: Ինչպես՝ «Բայց նրանց կարծիքով ո՞վ է ապագայի համար ապրում, այն ո՞ր խելապակասը, ում ապագայում պետական պարգևներ, կոչումներ, դրամաշնորհներ, բնակարանի բանալիներ և այլ ***կաշառառատ*** վերաբերմունք չի տրվում» («Հրապարակ», 3.11.2015): «Իսկ անկախ, ազատ երկրում, ինչպիսին Հայաստանը չէ, Ռուսաստանի ***ծայրագավառ*** լինելը ոչ մեկի, առավել ևս ռուսական ստորին խավի չինովնիկների համար նորություն չէ. գույք պարտքի դիմաց համապետական ***դիմազրկությունից*** հետո առավել ևս, ինչ գործոններով են մտավորականին կերակրում…»

---

[3] **Ս. Ա. Գալստյան,** Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 16:

[4] **Ա. Մ. Սուքիասյան,** Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2008, էջ 253-254:

[5] **Ե. Գևորգյան, Ս. Գևորգյան,** Հեռուստառադիոեթեր (Լեզվական մեղանչումներից մինչև անաղարտություն), Եր., 2010, էջ 19:

(«Հրապարակ», 3.11.2015): «Ադրբեջանի ժողովրդի համբերությունը սպառվելու վրա է. ***ալինյան կլանը*** գերադասում է չանտեսել այն» («Ժողովուրդ», 30.01.2016): «Եթե նախկինում թվային նկարչություն էր, հիմա կլինի ***էլեկտրոնային նկարչություն***…» («Ժողովուրդ», 30.01.2016): «Եվ այդ իրականությունը շատ հեշտ է տեսնել ընդամենը մեկ տարվա վաղեմության ***տեղեկութային*** արխիվում»: «Հիմնադիր խորհրդարանի քարտուղարությունը մեր քաղաքացիներին և ՁԼՄ-ներին հորդորում է ոչ մի պարագայում կուլ չտալ ***զորիբալյանական*** ապազգային ու հանցավոր կլանի խայծերը»: «ՎիվաՍել-ՄՏՍ-ը հրապարակել է իր ***ռադիոծածկույթի*** քարտերը»: «…կուսակցության կորիզը կկազմեն Երվանդ Բոզոյանը, Անդրանիկ Թևանյանը, Վիկտոր Սողոմոնյանը, ԲՀԿ-ի ***պրոքոչարյանական*** թևը, այդ թվում՝ Ստեփան Մարգարյանը» («Հրապարակ», 03.02.2016):

Ածանցավոր կազմություն ունեցող բառերը հանդես են գալիս տարբեր կաղապարներով: Դա պայմանավորված է ոչ միայն նրանով, որ ածանցները, որպես բառակազմական երկրորդական ձևույթներ, դրվում են արմատների կամ բառերի սկզբում կամ վերջում, այլև նրանով, որ տվյալ բաղադրության մեջ կարող են մտնել մեկից ավելի ածանցներ: Առանձին կաղապարներում ածանցները կարող են հանդես գալ հիմնական ձևույթների հետ և միասնաբար դառնալ բարդության բաղադրիչ:

Ժամանակակից մամուլում հանդիպում ենք ինչպես նախածանցավոր, այնպես էլ վերջածանցավոր բազմաթիվ կազմությունների: Նկատենք, որ վերջածանցավոր նորակազմությունները քանակապես գերակշռում են նախածանցավորներին: Այս երևույթը պայմանավորված է վերջածանցների կենսունակությամբ: Նորակազմ բառերում գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում ***ան-, ապ-, անդր-, արտ-, գեր-, ներ-, հակ-, վեր-, առ-*** նախածանցները:

Ան- նախածանցը չափազանց կենսունակ է, որը հոմանիշ է ***ապ***- ժխտական նախածանցին: Լ. Խաչատրյանի բնորոշմամբ՝ «Հոմանիշ ածանցները բառակազմական այն ձևույթներն են, որոնք, տարբերակվելով արտահայտության պլանում, մոտ կամ նույնական են բովանդակության պլանում»[6]: Ժամանակակից մամուլում հանդիպում ենք թե՛ ***ան***- նախածանցով և թե՛ ***ապ***- նախածանցով կազմված բառերի, որոնք հաճախակի կիրառվում են նաև բանավոր խոսքում՝ *անկոնտրակտ, անծառայություն, ապակայունացում, ապակառուցողական:*

Մեկ այլ սահմանման համաձայն՝ «…հոմանիշ ածանցները համաժամանակյա լեզվական կարգեր են»[7]:

Առ- և ***անդր***- նախածանցներով կազմություններն այնքան էլ տա-

---

[6] **Լ. Մ. Խաչատրյան,** Լեզվաբանության ներածություն, Եր., 2008, էջ 157:
[7] **Ս. Ա. Գալստյան,** նշվ. աշխ., էջ 252:

բածված չեն ժամանակակից մամուլում՝ *առաջնախաղ, առաջնաշնորհային, անդրազգային:*

Արտ- նախածանցով կազմություններն առավել գործածական են գրավոր խոսքում՝ *արտարժույթ, արտարժութային, արտաճառյա, արտախորհրդարանական:*

Գեր- նախածանցը բաղադրություններում հանդես է գալիս հիմնականում գոյականի, ածականի հետ՝ *գերանկում, գերգաղափար, գերշահ, գերազատ, գերավճար:*

Հաճախ ***գեր***- նախածանցը հանդես է գալիս համածանցավոր բաղադրություններում, ինչպես՝ *գերարժեզրկում, գերարտոնյալ:*

Ընդ- նախածանցը աչքի է ընկնում պասիվ գործածությամբ, և դրանով կազմված բաղադրությունները կիրառվում են թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում՝ *ընդդիմադիր մամուլ, ընդդիմադիր դաշտ:*

Հակ- նախածանցը ժամանակակից հայերենի կենսունակ ածանցներից է, որով կազմված բառերը վերաբերում են կյանքի տարբեր ոլորտների, և դրանց մեծ մասն ունի տերմինային արժեք՝ *հակաշուկայական, հակահիրաքյան, հակավճիռ, հակաէլիտա, հակախոցային, հակասողանքային, հակաղարաբաղյան, հակաքոչարյանական, հակակոռուպցիոն:*

Ներ- նախածանցով հանդիպող նորակազմություններն ունեն տերմինային արժեք և կիրառվում են հիմնականում գրավոր խոսքում: Այս նախածանցը ևս ակտիվ է իր գործածության հաճախականությամբ՝ ներընդդիմական, ներվրացական, ներճակատային:

Վեր- նախածանցը վերջին տասնամյակում բավականին լայն կիրառությամբ է հանդես գալիս: Այս ածանցով կազմությունները հանդիպում են հիմնականում գրավոր տարբերակով՝ վերադասային, վերազգային, վերաթողարկել, վերկուսակցական:

Ինչպես նշեցինք, ժամանակակից մամուլի բառապաշարն աչքի է ընկնում վերջածանցավոր նորակազմություններով, որը պայմանավորված է վերջածանցների գերակշռությամբ:

Դրանք վերաբերում են զանազան բնագավառների, և, հետևաբար, դրանց զգալի մասն ունի տերմինային արժեք, որը գործածվում է հիմնականում գրավոր խոսքում:

Բառակազմական ակտիվությամբ առավել գործուն են հետևյալ վերջածանցները՝ ***-ական, -ային, -անք, -որեն, -ություն, -ույթ, -ում, -ոտ, -որդ, -իչ:***

-Ական և ***-ային*** վերջածանցները բառային նոր միավորներ են կերտում և՛ հայերեն, և՛ փոխառյալ արմատներից կամ բառերից՝ *օմօնական, դատաձեռագրաբանական, էտապական, ռուցկոյական, ներընդդիմական, զորիբալայանական, ելցինական, արտագաղթային, նավամոդելային, կրկնաճուրդային, իմիջային, ինտերնետային, ցուցահանդեսատոնավաճառային:*

-Անք՝ *արգելանք, զսպանք:*

-Որեն վերջածանցը, ավելանալով բառին կամ արմատին, կազմում է մակբայի խոսքիմասային արժեք ունեցող բառային նոր միավորներ՝ *կայունորեն, օրենսդրորեն:*

-Ություն վերջածանցը, հաճախ դրվելով ածականների, բայահիմքերի վրա, կազմում է վերացական գոյականներ, դրվում է այնպիսի բարդությունների վրա, որոնք բաղադրված են երկուսից ավելի բառերից կամ արմատներից, որոնցից որևէ մեկն իր հերթին կարող է ածանցավոր լինել[8] *փաստաթղթաշրջանառություն, իրացվելիություն, դրամահավաքություն, հարևանադավություն, տեսալրատվություն, կենսազանազանություն, եվրակազմակերպություն, պատմահենություն, շահութախմբակցություն, ֆինվարձակալություն, միկրոգինեգործություն, գյուղփոխօգնություն, այգեպտղագինեգործություն:*

Վերջին տասնամյակում բավականին գործուն է ***-ույթ*** վերջածանցը, որով կազմված բառերն ունեն գոյականի խոսքիմասային արժեք՝ *տախտույթ, տեղեկույթ, բազմագործառույթ, դրամարժույթ, տարարժույթ, ռադիոծածկույթ, արտարժույթ:*

-Ում վերջածանցով նորակազմությունները բավականին գործածական են թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում՝ *տեղեկատվայնացում, բալզամազերծում, հայակիզում, գնանշում, դիտազննում, միջազգային համաներում:*

-Ոտ վերջածանցով կազմված բառերն ունեն ածական խոսքի մասի արժեք, որոնք կիրառվում են հիմնականում գրավոր խոսքում և ընդհանրանալու միտում չունեն՝ *կարիքոտ, կապտաթախծոտ:*

-Իչ՝ *էներգաբաշխիչ, ազգափրկիչ, չափորոշիչ, ջերմապաշտպանիչ:*

-Որդ՝ *դավանորդ, վստահորդ:*

Թեև այս ածանցներով կազմությունները հիմնականում մասնագիտական բառեր են, այնուամենայնիվ դրանց մի մասը գործածվում է նաև բանավոր տարբերակով և բնորոշ է լեզվի ժողովրդախոսակցական ոճին:

«Ածանցներն ու ածանցման կաղապարները, հիմնականում մնալով նույնը, դարերի ընթացքում ավելի են ճոխացել ու ընդարձակվել, ծավալվել ու լայն ընդգրկում ձեռք բերել: Անցյալից եկող որոշ ածանցներ ու ածանցական կաղապարներ դադարել են արդյունավետ լինելուց և ընդհակառակը՝ հնում սակավ կենսունակ մի շարք ածանցներ ու կաղապարներ բավականին ծավալվել ու ակտիվություն են ստացել: Այնպես որ ածանցումը դարերի ընթացում, լեզվի զարգացմանը զուգընթաց, որոշակի փոփոխություն է կրել քանակական և որակական առումով»[9],- նշում է Հ. Օհանյանը:

---

[8] Տե՛ս **Հ. Ա. Օհանյան,** Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 137:

[9] Նույն տեղում, էջ 112-113:

Ժամանակակից մամուլում հանդիպում են նաև այլ վերջածանցներով կազմություններ, որոնք չունեն հաճախակի կիրառություն: Այդ վերջածանցները, ունենալով պասիվ գործածություն և դրվելով տարբեր խոսքի մասերի վրա, կերտում են բառային նոր միավորներ:

-Ացու, -անի, -եղ, -է, -անոց, -ուհի, -յուն, -ուտ, -ավոր, -ուրդ, -ող վերջածանցներով կազմված բառերն ունեն հիմնականում գոյականի, ածականի խոսքիմասային արժեք՝ ***-ացու***՝ նախագահացու, նախարարացու, ***-անի***՝ ապրանքանի, ***-է***՝ ժանտախտե, ***-անոց***՝ չարչիանոց, ***-ուհի***՝ արագավազորդուհի, նախարարուհի, ***-ուտ***՝ բաղեղուտ, նոսրուտ, ***-յուն***՝ բռնազավթյուն, ***-ավոր***՝ տուրբոգլանավոր, ***-ուրդ***՝ պակասուրդ, ***-ող***՝ ինքնածախսածածկող, իշխանաստեղծող:

Ժամանակակից մամուլում լայն տարածում ունեն նաև համածանցավոր բաղադրությունները, որտեղ միաժամանակ հանդես են գալիս երկու և ավելի ածանցներ: Այսպես՝ **հակագործազրկային, անմեղավոր, արտարժութային, ամենաապաքաղաքական, ամենապոպուլիստական, ներընդդիմական, վերագահակալություն, տարադրամային, տեղեկութային, հակասողանքային, համաբուժարան:**

Ընդհանրապես, ածանցավոր նորակազմությունների զգալի մասն ունի տերմինային արժեք: Դրանց մի մասը հակված է ընդհանրանալուն և ժամանակի ընթացքում կարող է մտնել բառապաշարի ակտիվ շերտ: Ածանցավոր նորակազմությունների մեջ կարող են հանդիպել նաև ածանցների գործածության չարաշահումներ: Այդպիսի բաղադրություններն անսովոր տպավորություն են թողնում, հետևաբար՝ իմաստային հստակություն չունեն, ինչպես՝ նախարարացու, երանորեն, անմեղավոր և այլն: Ստեղծված բազմաթիվ ածանցավոր նորակազմությունների մի մասը դիպվածային է, քանի որ ունեն մեկ կամ մի քանի գործածություն:

Հանդիպում են նաև անհաջող նորակազմություններ, որոնք հետագայում լայն գործածություն չեն գտնում և ոճական որոշակի երանգավորում չունեն: Ասվածը հատկապես վերաբերում է առանձին գոյականներից **«չ»** մասնիկով նոր բառեր կազմելուն, որոնք խիստ անսովոր և անգործածական ձևեր են, ինչպես՝ չընկեր, չբանտարկություն և այլն[10]:

«Սա այն ժամանակ է սև, երբ շուրջը ***չսևություն*** կա» («Մունետիկ», թիվ 3/20, 5-12.02.1991): «***Չհետաքրքրվածությունն*** իր բացատրությունն ունի, որի լավագույն արտացոլումն օպերայի շենքին մոտիկ տարածքում երբեմն արևածաղիկ վաճառող տատիկի հետ այդ թեմայով զրույցն էր» («Ազգ», թիվ 9, 11.03.16):

Այսպիսով, արձանագրենք, որ արդի հայ մամուլը հագեցած է ածանցավոր նորակազմություններով, և գրեթե ցանկացած օրաթերթի,

---

[10] Տե՛ս **Լ. Եզեկյան,** Ոճագիտություն, Եր., 2006, էջ 140:

լրագրի ցանկացած համարում հանդիպում ենք նման կազմություններ-ի: Սերտորեն կապված լինելով հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի, սպորտի հետ՝ ժամանակակից մամուլը բառակազմական նոր միավորներ է ներառում բառապաշար՝ ավելի դիպուկ ու ժամանակին համահունչ ձևով բնութագրելու ներկայացվող նյութը: Նկատենք նաև, որ ցանկացած նորակազմ բառ, բառային միավոր, կայուն կապակցություն, մտնելով լեզվի մեջ, միանգամից չի հաստատվում, և ժամանակն է ճշտում լեզվական իրողությունների տեղը: Այս առումով մամուլը կարևոր դեր է խաղում հայերենի բառապաշարի զարգացման, հարստացման գործում:

Բանալի բառեր – *բառապաշար, ածանցում, նախածանց, վերջածանց, փոփոխություն, ժամանակակից մամուլ, ներքին ուղի, բառակազմական միջոց*

МАНУШАК СОГОМОНЯН – *Обогащение лексики прессы за счёт аффиксальных новообразований* – Изучая лексику прессы, значительное место следует отвести неологизмам. Язык богат различными способами словообразования и словообразовательными формами. Важную роль в создании новых слов играет, в частности, аффиксация. Аффиксальные слова в армянском языке отличаются разнообразием, и в современной прессе встречаются как префиксальные, так и суффиксальные способы образования неологизмов.

Ключевые слова: *лексика, аффиксация, префикс, суффикс, современная пресса, словообразовательные средства*

MANUSHAK SOGHOMONYAN – *Enrichment of Press Vocabulary with Derivative New Coinages.* - The analysis (examination) of newly-coined words is of great importance in the study of the press language. The means and modes of word-formation, as well as word word-formation patterns are reflected in the word-buidling system of the language.

Derivation as a word-building means plays an essential role in the process of creating new words. Derivative words appear in different patterns. In the language of modern media, we come across numerous coinages both with prefixes and suffixes.

Key words: *vocabulary, word-building, affixation, prefix, suffix, alteration, modern press, internal channel, word-formation*